

3725-3732

017.4

7-13



017.4

4.  
9594-42

ԳՐԱՑՈՒՑԱԿ

Ա. Պ. ԵԱԶԸՐՃԵԱՆ ԵՒ Ը<sup>ՎԿ.</sup>

ԳՐԱՏԱՆ

ՏԻԳՐԱՆԵԱՆ ԽԱՆ, ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԱՄ

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ



CATALOGUE

DE LA

LIBRAIRIE

A. B. YAZIDJIAN & C<sup>IE</sup>

1909

## Մ Ե Ր Գ Ր Ա Ց Ո Ւ Ց Ա Կ Ը

Մեր բաղմամբիւ յաճախորդներու խնդրանքով հրատարակեցինք ԳՐԱՑԱՆՍ Համառօտ Գրացուցակն ուր միայն նշանակուած են Կ. Պոլիս հրատարակուող դասագիրքերն ու Աղատութենէ ետք լոյս տեսնող հայրենաշունչ աշխատասիրութիւնները :

Ա. Պ. Եազըճեան Ընկերութեան Գրատունը իր Գրացուցակին մէջ նշանակուածէն զատ կը հայթայթէ նաև Վենետիկ, Վիեննա, Կովկասիա, Ամերիկա ցարդ հրատարակուած բոլոր երկասիրութիւնները :

Ա. Պ. Եազըճեան Ընկերութիւնն իր յաճախորդներուն վայրկեանը վայրկենին պիտի հազորդէ հետզհետէ հրատարակուած գիրքերն ալ՝ օրինակ .

1. Վրեժ . Վարդան Քանաչեան, հատոյթը յատկացուած ի նպաստ կարօտեալներուն, 5 դրուշ :
2. Ամպեր . Շահան Նարաչի, 4 դրուշ :
3. Այրած . Քնար, 2 դրուշ :
4. Մրինգ . Վահան Թարնաշ, 2<sup>1</sup>/<sub>2</sub> դրուշ :
5. Մնացական Սեւեճեան (Զեքունցի) Զեթունի Անցեալէն և Ներկայէն, 4 հատոր 20 դրշ .
6. Բուրգերէն . Միքայէ Բիւրաս, 3 դրուշ :
7. Աւարարի Արծիւը կամ Վարդանանի. Ողբերդ . 5 արար, Գին 5 դրուշ :
8. Գեղունի պոսկերագարդ . Տարեկան 10 ֆր . :

*Handwritten mark*

**Ա. Պ. ԵԱԶԸՃԵԱՆ ԸՆԿ. ԳՐԱՏԱՆ**

**Սեփական հրատարակություններն են**

**Հ. ԵՆ Զ. Ա.ՍԱՏՈՒՐ**

**1. Գործ. Քերականություն**  
*Երեք Դասընթացք*

**2. Թանգարան**  
*Երեք Դասընթացք*

**Գ. ԽԱԶԿՈՆՑ**

**1. Կրօնի Ուսում**  
*Երեք Դասընթացք*

**2. Աւխարհագրություն**  
*Երեք Դասընթացք*

**3. Գուն պիտի ըլլա**  
*Երկու Դասընթացք*

**4. Հայոց Պատմություն**  
*Երկու Դասընթացք*

**Գ. ԳՈՎԱՅՆԱՆ**

**1. Թուարանուր. մատուր ու գրաւոր**  
*Երեք Դասընթացք*

# Մ Ե Ր Ն Ո Ւ Է Ր Ը

Կը հրաւիրենք Գաւառի Ազգ. Վարժարաններու Պատ. Վարիչ մարմինները — Թաղ. Խորհուրդ, Հոգարարձութիւն, Կրթական Մասնախումբ, Ընթերցարանի մասնախումբ, Գրադարանի Մասնախումբ, Տեսչութիւն և այլն — որ հաճին իրենց գրեւնական պէտքերը Ա. Պ. ԵԱԶԸՃԵԱՆ ԸՆԿ. ՊՐԱՍԱՆՍ միջոցաւ հայթայթել: Արդ՝ Գաւառի ո՛ր վարժարանին մէջ որ դորժածուին մեր սեփական Գասընթացքները, գոհացուցիչ, նպաստաւոր զեղջէ դատ, բացառիկ նուէր պիտի տանք աղքատիկ ուսանողութեան, պաշտօնական մարմիններէ կարօտ ուսանողներու ցանկը մեզի հաղորդուելէ ետք:



Մեր Գրացուցակը ձեռի կը դրկուի իր հասցէն որոշ նշանակած փափափողներուն:

4 7330-57

## ԲՆԱՉԽԱՐԶԻԿ ԲԱՌԱՐԱՆԸ



Բնաշխարհիկ Բառարանն մեր անցելոյն ու ներկային պատկերազարդ յուշարձանն է . իր մէջ նկարագրուած են հայրենի աշխարհի նամանգն ու գաւառ, քաղաքն ու աւան, շէն ու գիւղ, լեռ, դաշտ, գետ, լիճ, վանք, եւ վերջապէս Բնաշխարհի ամէն անկիւնն, պատմական յիշատակներով համեմաճ : Կը յիշուին նաեւ հայ գաղթավայրերը, յորս բնակած եւ յիշատակ մը թողած է հայու թիւնն եւ կամ տակաւին կը բնակի :



# Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

Կրկին տպագրուածեամբ այս հոյակապ եւ ոչ միայն ամէն հայու այլ եւ օտարազգի հայասէրներու սիրելի ու օգտակար գործի առաջին հատորը, ձեւացած քառածալ 843 էջէ եւ զարդարուած 350 գեղատիպ պատկերներով:

Այս հատորի գինն է •

Թղթակազմ բազմագոյն կողքով 15 ֆր. = 6 ռուբլի = 3 տոլար :

Ամուր յատուկ կազմով 20 ֆր. = 8 ռուբլի = 4 տոլար :

Մեր հասցէն է՝

*Imprimerie Arménienne*

*VENISE*

*(Italie)*



## Ա. Զ. Գ

Կը շարունակուի ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆԻ երկրորդ հատորի բաժանորդագրուածիւնը, որուն առաջին յիսուն թերթեան գիրքը լոյս կը տեսնէ քիչ օրէն: Հատորս զարդարուած է բազմաթիւ նոր ու հետաքրքրական զուտ ազգային պատկերներով:

Բաժանորդագրուածեան պայմանք նոյն են: Բաժնեգինն է զուտ 15 ֆր. = 6 ռուբլի = 3 տոլար:

ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆԻ բաժանորդ կը համարուին միայն անոնք, որ ժամանակին ուղղակի եւ կամ մեր գործակալներու միջոցով մեզ կը հասցընեն բաժնեգները: Մեր գործակալները, իւրաքանչիւր 10 օրինակի վրայ մէկ օրինակ նուէր կ'ընդունին:

ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆԻ ՎՐԱՅ



Հակառակ ազգային մեծ ճգնաժամին և անանդորր վիճակին, Բնաշխարհիկ Բառարանն մեծ ընդունելութիւն գտաւ Բնաշխարհի սիրով տոչորող ամէն Հայու կողմէ: Ահա այդ պատճառաւ էր, որ տպագրութեան ընթացքին մէջ բոլորովին սպառեցաւ առաջին հատորը և Տպագրատան Վարչութիւնն, շատերու փափաքին գոհացումն տալով՝ վերստին տպագրեց այդ հատորը:

Անկարելի է այս փոքրիկ տետրին մէջ ամփոփել, բոլոր այն գրութիւնները, որոնք զանազան ժամանակաց մէջ հրատարակուեցան ազգային թերթերէն, Բնաշխարհիկ Բառարանի վրայ: Ուստի կը հրատարակենք միայն այդ

գրութեանց մէկ մասը . ուզելով գա-  
ղափար մը տալ Բնաշխարհիկի Նոր  
Բաժանորդներուն :



Վենետիկ... անուն մը որ նոյնքան  
քաղցր ու անուշ կը հնչէ մեր ականջ-  
ներուն, որքան Բնաշխարհին նուիրա-  
կան ու յիշատակելի վայր մը : Ինչո՞ւ  
այսչափ կապուած Հայ սրտին հետ : Հոն  
ոչ Հայկ ազատութեան առաջին մարտը  
մղեց . ոչ Տիգրան մը կամ Լեւոն մը  
բազմեց, և ոչ ալ Վարդան մ'իսկաւ :  
Սակայն հոն ծնաւ Հայութեան ներկան :  
Դար մը առաջ երբ Մխիթար Սեբաս-  
տացի իր ոտքը Վենետիկ կոխեց, այն  
օր Հայկական վերածնութեան սկիզբը  
դրուեցաւ :

Հայ տպագրութիւնը եթէ Ս. Ղազարի  
մէջ չը ծնաւ, սակայն հոն կեանք ունե-  
ցաւ :

Դար մ'առաջ մտէք Հայաստան ու  
Հայ դպրութիւն փնտռեցէք, հո՛ն՝ Ոսկե-  
դինի դարէն հետզհետէ ծլած ու ծաղկած  
մատենագիրները փոշիներու մէջ կը  
փատէին, իսկ հայ միտքը որ ընդունակ  
էր վերածնութեան, թանձր քողին ետեւ  
ծածկուած կը մնար : Վերածնութեան  
այդ հսկայ գործին առաջին քայլը Վե-  
նետիկ առաւ :

Ոմանք կանգ առնելով Վենետիկի  
գրական բուրաստանին առաջ, Չամ-  
չեան, Խնճիճեան, Հիւրմիւզ, Բագրա-  
տունի, Ալիշան հսկայ անուններէն վերջ  
Վենետիկի ներկան ողբալի կացութեան  
մէջ կը գտնեն : . . .

Վենետիկ ալ նշանակելի երկ մը չի  
արտադրեր, ահա, այն խուլ գանգատը  
որ վերջերս շարունակ կուղղուէր Ս .  
Ղազարի բազմօգուտ տպարանի հաս-  
ցէին :

Ու այս խոկմանց մէջ սեղանիս վրայ  
գտայ « Բնաշխարհիկ Բառարան »-ը (Ս .

պրակ). Ս. Ղազարի էն վերջին հրա-  
տարակութիւնը:

« Բառարան » բանաստեղծներ չեն  
պատրաստեր: Խուլ գրասենեակի ա-  
ռանձնութեան, յարատեւ և մեղուա-  
ջան աշխատասիրութեան արդիւնք է  
բառարան, զի նա կը կազմուի ճշգրիտ  
իրականութիւններէ: Բնաշխարհիկ Բա-  
ռարանը արժանի է ամեն գնահատու-  
թեան, որուն հեղինակը քրտնաջան աշ-  
խատութեան հետ, ցոյց կուտայ և հա-  
ւաքողի սուր ընդունակութիւն:

Նախ հեղինակն թող խօսի՝ « Մըջափ  
տխուր, ո՛րչափ և ողբալի մեր բնաշ-  
խարհի ներկայ վիճակը, այնքան սիրե-  
լի, այնքան և ցանկալի իւր տարակաց  
որդեկաց համար իրենց հարց և նախ-  
նեաց անմահ յիշատակներն, զորս ներ-  
կայ բառարանիս մէջ փափաքեցանք և  
ջանացինք ի մի ամփոփել: . . . »

Եթէ մեր ջանից ու փափաքանաց և  
հասարակաց զգացման համապատաս-

խան երկ մը վկայուի առաջիկայ ծանր  
աշխատութիւնս ի Բանասիրաց՝ մենք  
զմեզ երջանիկ պիտի համարինք ։

Ուրեմն հեղինակին ջանքն է « Բառ-  
գրքի » մը մէջ հաւաքել Հայրենի աշ-  
խարհին նահանգն ու գաւառ, քաղաքն  
ու աւան, շէն ու գիւղ, լեռ, դաշտ, գետ,  
վանք, ու վերջապէս Բնաշխարհին ամէն  
անկիւն պիտի խօսի հոն, պատմական  
յիշատակներով համեմաժ ։

Ներկայ պրակը որ կը վերջանայ ծո-  
վային Կիլիկիոյ Սնամուռ գաւառով՝ (ի  
հնումն հռչակաւոր հրուանդան և մեծ ու  
շէն քաղաք), կատարեալ յաջողութիւն  
կը խոստանայ այս կարեւոր ձեռնարկին ։

Հեղինակ իր այս աշխատութիւն կա-  
տարելու համար ձեռքի տակ ունեցած  
է Բնաշխարհի մասին հրատարակուած  
թէ՛ հայերէն և թէ՛ եւրոպական լեզունե-  
րով գրեթէ բոլոր հրատարակութիւնները  
ու անոնցմէ խնամով օգտուել ու դասա-  
ւորել գիտցած է ։ . . .

Բնաշխարհիկ Բառարանի Ա. Պրակ  
կը բաղկանայ 20 տպագրական թերթե-  
րէ. լաւ թուղթի վրայ, և մաքուր տպա-  
գրութեամբ:

Ամէն անոնք որոնք կը հետաքրքրուին  
Բնաշխարհով, ու կուզեն իրենց չգիտ-  
ցած աննուններու մասին տեղեկութիւն-  
ներ ստանալ «Բնաշխարհիկ Բառարան»  
ունենալու են:

ՋԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՅ, 1900 թ. 22:



Պատկերազարդ Բնաշխարհիկ Բառա-  
րանի երկրորդ պրակը հեւ ի հեւ թղթա-  
տելէ ետքը սքանչացած մնացի: Ճիշտն  
ըսելով, առաջին պրակը տեսած չեմ,  
բայց ներկայս թէ՛ առաջնոյն և թէ՛ յե-  
տիններուն վրայ կարող է նպաստաւոր  
զաղափար տալ մեզի:

Վենետկոյ Մխիթարեան Վեր. Հարք  
իրենց սոյն ստուար գործերով յաջողե-

ցան մեզի ապացուցանելու որ իրենք  
ալ՝ եւրոպական տպարանատէրներու  
պէս՝ կրնան, համեստ գումարի մը փո-  
խարէն, ազգը հարստացնել թէ՛ պարու-  
նակութեամբ, թէ՛ թղթոյն ազնուու-  
թեամբ և թէ՛ պատկերներուն գեղեցկու-  
թեամբ ճոխ հրատարակութիւններով:

Այս երկրորդ պրակը, որ 160 երկ-  
սիւն էջերէ կը բաղկանայ, Անամուտ բա-  
ռին շարունակութեամբ կ'սկսի և Ար-  
տաշատի վրայ տեղեկութիւնները չ'վեր-  
ջացուցած կը վերջանայ: Այդ 160 էջե-  
րուն իւրաքանչիւր պարբերութիւն, և  
նոյն իսկ իւրաքանչիւր բառը մէյ մէկ  
նորութիւն կամ մէյ մէկ վերյուշում  
կը ներկայացնէ Հայկական սիրտե-  
րու: Մանաւանդ գաւառացիք, անոնք  
որ երկայն տարիներէ ի վեր պանդխտած  
են օտար աշխահ, յուզեալ սրտով և ար-  
տօւրակաթ աչքերով պիտի կարդան ի-  
րենց մանկական զրօսավայրերու նկա-  
րագրութիւնը, աչքերուն առջև տեսնե-



լով այն վայրերէն շատերուն պատկեր-  
ները: Այսօր ալեգարդ ծնողներ՝ իրենց  
սենեկէն առանց դուրս ելլելու՝ պիտի  
կրնան վերստին այցելել այն ուխտա-  
տեղիները, ուր կը վազէին պաշտելի  
միամտութեամբ և հաւատացեալի սրտա-  
բուդիս ջերմեռանդութեամբ կեանքի այլ  
և այլ պարագաներու մէջ: Երիտասարդ-  
ներն ալ, այն աւերակաց կոյտերուն  
մէջ՝ զոր յստակօրէն պատկերացած պի-  
տի գտնեն այն պրակին մէջ, թերևս պի-  
տի կրնար որոշել և ճանչնալ ծառի կոճղ  
մը, կիսաւեր կամար մը, հայկական  
ամրոցի մաս մը, ժայռ մը, որ իրենց  
սիրտերը պիտի թրթռացնէ անմոռանալի  
անցեալի մը յուշով:

Պրակիս մէջ մասնաւոր յիշատակու-  
թեան արժանի են Անի քաղաքին և աւե-  
րակաց վրայ հմտալից տեղեկութիւնք,  
որոնք 30 էջ գրաւած են 30 պատկեր-  
ներով:

Աշտարակ, Անկիւրիս (Էնգարէ), Աս-

տրախան, Արմաշիր լափուելիք գրութիւն-  
ներ են: Անգղիոյ և Հայոց մէջ եղած յա-  
րաբերութիւնք ալ իրենց շահեկանու-  
թիւնն ունին:

Անկարելի է պրակիս պարունակու-  
թեան վրայ մանրամասն տեղեկացնել  
ընթերցողը, կը բաւականանամ միայն  
յայտնելով այն կարծիքը, թէ գործոյս  
ամբողջութիւնով ամբողջ մեր հայրենիքը  
պիտի ունենանք մեր յարկին տակ:

ԱՐՇԱՆՈՅՍ, 1900 թ. 128:



Բազմավէպ սկսած է նաև հրատարա-  
կել Բաշխարհիկ Բառարան խորագրին  
տակ սքանչելի աշխատասիրութիւն մը  
զոր կը ստորագրէ Հ. Սուքիաս Լփրի-  
կեան: Անունէն կրնան դատել « Բիւ-  
րակն » ի ընթերցողները թէ ինչ է այս  
բառարանին նիւթն ու նպատակը: Հան-  
դիսարանի Հոկտ. համարի մէջ կը խօսի

Ամասիոյ վրայ, բազմակողմանի ծանօ-  
թութիւններով ի վեր կը հանէ պատ-  
մական, աշխարկագրական, տեղագրա-  
կան, նկարագրական, երկրագործական,  
արուեստական և վաճառականական կա-  
րեւորութիւնը, վիճակագրական տախ-  
տակներով:

ԲԻԻՐԱԿՆ, 1898 թ. 37:



Առջեւնիս ունինք այս կարեւոր բա-  
ռարանի առաջին քսանթերթեան պրակն,  
որ կը հասնի մինչև ԱՆԱՄՈՒՌ անունը,  
զարդարուած ընտիր պատկերներով և  
այլազան արձանագրութեամբք. գործ  
մը՝ որուն նմանը չէր տեսնուած դեռ  
մեր մէջ, ի բաց առնելով Միսիթար Աբ-  
րահօր և Ն. Ճիվանեանի Յատուկ ա-  
նուանց բառարաններն, որոնք, — պէտք  
է խոստովանիլ, — որքան ալ առաջնու-  
թեան պատիւը վայլեն՝ չեն կրնար հա-

ւասարիլ Վեր. Հ. Էփրիկեանի երկա-  
սիրութեան: Գործին այսքան կարեւո-  
րութիւն ստանալուն գաղտնիքն հոն է  
որ՝ Վեր. Հեղինակը կրցած է օգտուիլ  
ազգային և օտար ամէն կարգի հրատա-  
րակութիւններէն: ... Վերջապէս գործ մը՝  
զոր կրնանք յանձնարարել ամէն կարգի  
կարդացողներու, յայտնելով նաև թէ  
մեզի չափ գոհ պիտի մնան նաև ամէնքն  
ալ:

ԲԱՆԱՍԻՐ, 1899 էջ 345:



Հայաստանի աշխարհգրական բառա-  
րանի այս երկրորդ պրակն ալ հրատա-  
րակուած է որ կը բաղկանայ 161-320  
երեսներէ, և կը հասնի մինչև « Աշտի-  
շատ ». զարդարուած է 91 պատկերնե-  
րով: Այս պրակի մէջ կը գտնուին վի-  
ճակագրական, կրթական և այլ ընդար-  
ձակ տեղեկութիւններ Ատրպատականի,

Անիի (բազմաթիւ պատկերներով), Ատա-  
նաի, Արաբկիրի, Արճէշի, Արղնի Մա-  
տէնի, Անկիւրիաի, Աշտիշատի, Անգղի-  
աի-Լոնտոնի և Մանչէսթըրի հայ գա-  
ղութները-Ասորախանի և այլ բազմաթիւ  
քաղաքների վրայ, որոնք կամ մեր հայ-  
րենի երկրին կը վերաբերին և կամ հայ  
գաղթականներ կը բնակին կամ բնակած  
են այն տեղեր:

Աւելորդ է ըսել որ այս կարևոր և  
հսկայ աշխատութիւն — արդիւնք ման-  
րագնին և երկար խուզարկութիւնների և  
ուսումնասիրութիւնների — շատ հետա-  
քըրքըրական ու շահեկան է ամեն Հայի  
համար, ինչպէս և ամեն անոնց համար  
որոնք Հայերի և Հայաստանի մասին կը  
հետաքըրքըրուին:

ԱՐՄԷՆԻԱ, թԶ. Թ. 5:



Հ. Էփրիկեանի այս աշխատութիւնը արժանի է առանձին ուշադրութեան : « Բնաշխարհիկ Բառարան » — դա աշխարհագրական անունների մի հարուստ ժողովածու է : Մինչև այժմ հրատարակվել են այդ գործի առաջին և երկրորդ հատորները , որոնք միասին կազմում են 320 մեծադիր , երկու սիւնակից բաղկացած էրեսներ : Այդ հատորների մէջ դեռ չէ վերջացել Ա տառը , այս հանգամանքը արդէն ցոյց է տալիս , թէ որքան ստուար ու պատկառելի պիտի լինի ամբողջ աշխատութիւնը : Մի աշխատութիւն , որ յիշեցնում է վենետիկի այն ժամանակները , երբ ակադեմիական հաստատիր հրատարակութիւններ էին լոյս տեսնում :

« Բնաշխարհիկ Բառարան » ասելով չը պէտք է հասկանալ այն տեղերի բա-

ուարանը, որոնք Հայաստանում են գրան-  
վում: Ոչ. բառարանի մէջ մտնում են և  
այն բոլոր տեղերը, ուր հայը ոտք է  
դրել իր դարաւոր թափառումների ժա-  
մանակ: Այսպէս, դուք այս բառարա-  
նում գտնում էք և « Անգլիա » բառը:  
Այդտեղ Մեծ Բրիտանիայի մանրամասն  
կամ համառօտ տեղագրութիւնը չէք  
գտնում դուք, այլ տեղեկութիւններ այն  
մասին, թէ հայերը Անգլիայում երբ են  
եղել, ինչ վաճառականութիւն էին ա-  
նում, ինչ անուններ են թողել եւ այլն:  
— Ահա թէ որքան լայն ծրագիր է վեր-  
ցրել Հ. Կիրիկեան:

Գալով հայաբնակ տեղերի նկարա-  
գրութեան, մե՛նք այստեղ տեսնում ենք  
նոյն իսկ աննշան գիւղերի անուններ, ի  
հարկէ, այն անունները, որոնք կարող  
էին յայտնի լինել վենետիկում նստած  
հայ վարդապետին: Հինն ու նորը, աւե-  
րակ ու կանգուն վանքը, մի խօսքով  
այն ամենը, ինչ աշխարհագրական տեղ

7330-17

է ներկայացնում եւ թողել է անուն,  
մտել է « Բնաշխարհիկ Բառարանի »  
մէջ: Ինչ կասկած, որ բոլոր տեղերի  
մասին Հ. Էփրիկեանը չունի լիակատար  
տեղեկութիւններ: Այդպիսի բան չէ էլ  
կարելի պահանջել: Ուստի եւ անխու-  
սափելի է պատահել Բառարանի մէջ  
այսպիսի բացատրութիւններ: « Արնիա-  
զիւղ Ախալքալաքի, 18 տուն բնակ-  
չօք »: « Ագ-Դաշ, գիւղ Ճակատք (Այ-  
րարատ) գաւառի մէջ »: Բայց դրա փո-  
խարէն այն տեղերը, որոնք յայտնի են,  
ունեն հարուստ տեղեկութիւններ, նկա-  
րագրված են շատ մանրամասն կերպով,  
որքան այդ հնարաւոր է մի բառարա-  
նում: Այսպէս, Անին գրաւում է 30  
երես, Ախալցխան – 8 երես, Ախալքա-  
լաքը – 6 երես, Ալէքսանդրօպօլը – 6  
երես: Նկարագրութիւնների մէջ չէ մո-  
ռացված անցեալը. իսկ ներկան շատ  
տեղերում լուսարանված է նաեւ վիճա-  
կագրական տեղեկութիւններով: Այս



վերջին տեղեկութիւնները առատ են մա-  
նաւանդ Ռուսաց Հայաստանում գտնվող  
տեղերի նկարագրութեան մէջ. հեղինակը  
ձեռքի տակ ունեցել է Ռուսաստանում  
լոյս տեսած պաշտօնական վիճակագրու-  
թիւնները:

Բառարանի մի մեծ առաւելութիւնն  
էլ այն է, որ նա պատկերազարդ է:  
Պատկերների կողմից Հ. Լփրիկեանը  
շատ նպաստաւոր պայմանների մէջ է  
գտնվում. Ս. Ղազարի միաբանները վա-  
ղուց են սկսել պատկերազարդ տեղա-  
գրութիւններ տալ, բաւական է յիշել  
Հ. Ալիշանի «Այրարատ», «Սիսուան»,  
«Սիսական», «Շիրակ» պատկերազարդ  
գործերը: . . . .

Հ. Լփրիկեանը իր այս գեղեցիկ և  
պատուարեր գործը գլուխ հանելու հա-  
մար կարօտ է մեր հասարակութեան ա-  
ջակցութեան: Թող չը կարծեն թէ դրա-  
մական օգնութիւն հասցնելու հրաւէր  
ենք կարդում: Ս. Ղազարի վանքը, ու-

նենալով շատ համեստ եկամուտներ ,  
շարունակում է իր հրատարակչական  
գործունէութիւնը առանց լալկան մու-  
րացկանութեան դիմելու: Ներկայ դէպ-  
քում է բարոյական աջակցութիւն: Ահա  
ինչպէս:

Թիւրքաց և Ռուսաց Հայաստանում  
կան շատ տեղեր , որոնց նկարագրու-  
թիւնները հրատարակված չեն , բայց  
սրանք պէտք է մտնեն Բառարանի մէջ:  
Ուստի Հ. Էփրիկեան մի շրջաբերա-  
կան նամակով դիմում է բոլոր գրա-  
սէր հայերին , որ նրանք օգնեն իրան:...

« Բնաշխարհիկ Բառարանի » պէս բու-  
վանդակութեամբ և արտաքինով գեղե-  
ցիկ մի գիրքը կարող է պատուաւոր տեղ  
բռնել իւրաքանչիւր , նոյն իսկ խստա-  
պահանջ հայի սեղանի վրայ: Խորհուրդ  
ենք տալիս ձեռք բերել այդ գիրքը , մա-  
նաւանդ որ գինն էլ շատ մատչելի է:

Լ.

ԲՇԱԿ 1901 թ. 111



Հ. Ս. ԷՓՐԻԿԵԱՆ. — ՊԱՏԿԵՐԱ-  
ԶԱՐԴ ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆ (Հա-  
տոր Ա, Երկրորդ Տպագր. Վենետիկ  
1903-1905)

Առանց յաւակնելու ստուգած ըլլալ  
ընդարձակ պարունակութեան ճշդու-  
թիւնը, բան մը որուն համար անհրա-  
ժեշտ ձեռնհասութիւնը, դժբաղդարար  
շատ կը պակսի մեզի, բնաշխարհի  
տգէտներու՝ կրնանք յայտնել սակայն  
այն գրաւիչ տպաւորութիւնը զոր կը  
կրենք դարձնելով այս շքեղ հատորին  
էջերը, զմայլելով հաւարուած տեղեկու-  
թիւններուն առատութեան եւ ընդօրի-  
նակուած նկարներուն գեղեցկութեան  
վրայ:

Ուրիշներ, այս ճշմարտապէս մեծ եր-  
կին առաջին տպագրութեան առթիւ,  
ըսած են անշուշտ անոր հայրենասիրա-

կան եւ գեղեցկագիտական կրկնակ ար-  
ժանիքը: Աւելորդ չէ կրկնել թէ Հ. Ս.  
Էփրիկեան, վանականի իր անսպառ  
համբերութեամբ, հաւաքած է հոն, խը-  
տամփոփ ձեւին մէջ, ամէն ինչ որ մեր  
հին հայրենեաց անցեալը եւ ներկան է՝  
անոր աշխարհագրութիւնն ու պատմու-  
թիւնը, ընդելուզած իրարու եւ լուսա-  
զարդուած թանկագին արտադրումնե-  
րով որոնք կը բաղկանան հին դրամնե-  
րու՝ ինչպէս նաեւ հնութենէն մեզի հա-  
սած փառաւոր աւերակներու եւ հին  
պատմական տեղերուն վրայ կանգնուած  
նոր ոստաններու պատկերներէն:

Բացի հաւաքիչի եւ դասաւորիչի այս  
ինքնին գնահատելի գործէն որ կը տա-  
րածուի մեր բնաշխարհէն դուրս, դրացի  
երկիրնիրու վրայ ալ՝ Հ. Էփրիկեան չէ  
վարանած նաեւ տեղ-տեղ քննական  
աշխատութիւն մը կատարելու, քով քովի  
դնելով տարբեր պատմիչներու կամ  
հնախոյզներու մեկնաբանութիւնները եւ

փաստացի կերպով ցոյց տալով անոնց  
մէջէն, ըստ իրեն, ճշդագոյնը :

Հայ ընթերցողը, թղթատելով այս  
հատորը առաջին անգամ, դէպի հեռա-  
ւոր իր հայրենիքին ու անոր անցեալին  
խորը ճամբորդել կը կարծէ՝ այնչափ  
կենդանութիւն կայ այդ էջերուն մէջ  
եւ, հակառակ « բառարան » է մը սպա-  
սուած անպաճոյճ ոճին, այնչափ կը  
զգայ որ գրողին սիրտը մօտ է իր գրած  
նիւթերուն :

Բարերազողութիւն մըն է տեսնել որ  
Բնաշխարհիկ Բառարանը քիչ ժամանա-  
կուան մէջ արժանացած է բ. տպա-  
գրութեան, ինչ որ կ'ապացուցանէ հա-  
սարակութեան գնահատութիւնը արժա-  
նաւոր Մխիթարեանին այս օգտակար  
եւ գեղեցիկ ձեռնարկին :

Վ. Թ.

ՇԻՐԱԿ 1905, Թ. 9

Ուէսդ Հօպօքըն, 15 հոկտ. 1905

Աշնան սկիզբները, ամպամած ու մռայլ օր մը, սենեկիս մէջ գլխահակ կը թերթեմ՝ վենետիկ Միսիթարեանց Միաբանութեան հրատարակած, հեղինակութիւն Հայր Ս. Էփրիկեանի՝ ԲՆԱՃԻՍԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆը զոր հազիւ քանի մ'օր էր ստացեր էի թղթատարէն:

Կը դարձնեմ թերթիկները մին միւսին ետեւէն ու հոգիս տարբեր տարբեր զգացումներով խռովուած՝ մարմինէս զգալի սարսուռներ կանցնին, նորանոր պատկերներուն ու նկարագրականներուն հանդէպ՝ աննկարագրելի յուզումով կը լեցուիմ. սակայն կը շարունակեմ թերթելը, կը պտրեմ «հայրենիք—ճննդավայր» իս անունը և ահա կանգ կառնեմ «Աղձնիք» ին առջեւ. բայց ի զո՛ւր,

այստեղ շատ համառօտ անցնելով՝ կը  
յանձնարարէ քաղաքի անունին որ  
հաւանականարար Բ կամ Գ հատորին  
մէջ լինելու է: Ու կը յառաջանամ  
պատկերախոյզ դիրքիս մէջ և կարծես  
աներեւոյթ զօրութիւն մը կը կասեցնէ  
զիս շարք մը պատկերաց աւերակաց  
առջև. ա՛յ անհնարին է առանց կար-  
դալու անցնիլ. Անին է որ կը պար-  
զուի աչքերուս առջև և կը մագնիսացնէ  
զիս իւր փլատակ շէնքերով, կիսակոր-  
ծան տաճարներով, վայրահակ աշտա-  
րակներով և բոլոր հին ու խարխուլ  
ճարտարապետութիւններով. տեսարան-  
ները ինչքան սրտագրաւ են. բայց այդ  
չէ բոլորը. պատմուածք մը կայ, ման-  
րամասն տեղեկագրութիւն մը, Արժ. Հօր  
հրացայտ գրիչն է որ կը պատկերացըէն  
Աննիի փառքն ու փայլը, շէնն ու եզա-  
կանութիւնը և հազար ու մէկ սրբա-  
վայրերն ու իշխանազուկներու բնակա-  
րանները. այլ աւա՛ղ կը պատկերացնէ

զայն և տխուր ու սրտաճմլիկ՝ «հափա-  
փեալ ու առեւանգեալ Անի»ն...:

Այսպէս... ներկայ սերնդեան սիրտն  
ու հոգին ճմլող ու զմայլեցնող և միան-  
գամայն հայրենավառ յիշատակներ ան-  
մոռաց պահելու կոչումն ունի վեհե-  
տիկեան Հարց այս խնամով տպագրու-  
ած և Հայր Ս. Էփրիկեանի ճարտար  
գրչով պատկերացած **ԲՆԱՇԽԱՐՀԻԿ  
ԲԱՌԱՐԱՆ:**

S U. Ճ Ա. S

---

Ամերիկայի համար Բնաշխարհիկ Բա-  
ռարանի գործակալն է Պ . Յ . Ղ ա զ ա -  
րեան . հասցէն է .

*H. M. Martin*

*102 Pleasant Street*

*WORCESTER, MASS.*

---

*(u. s. a.)*

---



## ԱՐԵՒԵԼՔ



Լոյս տեսաւ մեր տպարանէն Հայաստանի և Դրացի Երկիրներու մեծագիր (մետր  $1 \times 1, 25$ ) քարտէզը Արևելք վերնագրի տակ : Այս քարտէզը յատկապէս պատրաստուած է ազգային վարժարաններու և վաճառականական գրասենեակներու համար : Մասնաւոր խնամք տարուած է տպագրութեան մաքրութեան և տառերու յստակութեան : Եօթը զանազան գոյներով կ'որոշուին բոլոր դրացի տէրութեանց երկիրները : Քարտէզին մէկ անկիւնը կայ նաև կ. Պոլսի մասնական քարտէզը, իսկ հա-

րաւակողմը զանազան սիւնեկաց մէջ  
դրուած են օգտակար վիճակագրական  
տեղեկութիւններ :

Գինն է ֆրանկ 5 = ուրլի 2 =  
տուար 1 :

---

---

## ՄԵԶՄԷ ԿԱՐԵԼԻ Է ՍՏԱՆԱԼ

### ՆԱԵՒ ՀԵՏԵՒԵԱԼՆԵՐԸ

Բ Ա Ջ Մ Ա Գ Ո Յ Ն Ք Ա Ր Տ Ե Ր

100ը տասը ֆրանկ :

Մայր Հայաստան (Բնաշխ. Բռ.) :

Աւարայրի Գիւցազները :

Հանգիստ Ս. Լուսաւորչի :

Թաղում Ս. Մեսրոպայ :

Մ Ի Ա Գ Ո Յ Ն Ք Ա Ր Տ Ե Ր

100ը վեց ֆրանկ

Արա գեղեցկի դիակն և Շամիրամ :

Տիգրանուհի և Աթդահակ :

Արշակ Պարթեւ զՎաղարշակ կը պսակէ :

Մարիբաս Կատինա Վաղարշակայ առջեւ :

Խոսրովիդուխտ, Օտա և Տրդատ :  
Արտաշիր զԽոսրով զահընկէց կ'ընէ :  
Լեւոն Բի Գահակալութիւնը :  
Հեթում Ա. կ'ողբայ իւր երկու որդիքը :

Մեծադիր բազմագոյն պատկերներ  
Աւարայրի Դիւցազները . . . ֆր. 1. —  
Մայր Հայաստան (Բնաշխ. Բռ.) ֆր. 1. —

---

---

## Մ Ե Ծ Ա Դ Ի Ր Պ Ա Տ Կ Ե Ր Ն Ե Ր

### Հ Ա Յ Ո Յ Պ Ա Տ Մ Ո Ւ Յ Ե Ա Ն

Հաւաքածոյն 5 ֆրանկ :

Անուշանաւան կը նուիրուի Արմաւրի սօսի-  
ներուն :

Արա Գեղեցկի դիակն և Շամիրամ :

Սաթենիկ և Արտաշէս :

Հայք զՄորփիւլիկէս կը սպանեն :

Սմբատ Սանատրկոյ թագով կը պսակէ զԱր-  
տաշէս :

Վահան Մամիկոնեան կը պատուուի Պարսից  
Վաղարշ թագաւորէն :

Հայք Անին պաշարող Յոյները կը հալածեն :

Լեւոն Բի յաղթական մուտքն յԱնտիոք :

Թորոս Ա. Բանդարգել կու տայ Գագիկը սպան-  
նող Մանտալեայ երեք եղբարքը :

Հեթում Ա. կ'ողբայ իւր երկու որդիքը :

## Փ Ե Ղ Ո Ի Ն Ի

Անգամ մը ևս պարտք կը համարինք ծանուցանել հայ հասարակութեան, թէ ամէն հայու սեղանի շքեղ զարդ մը ըլլալու սահմանուած այս պատկերազարդ հրատարակութեան հաւաքածոյն 1901-2-3-4-5 տարիներու, զեղչեալ գնով կը վաճառենք 30 ֆրանկի, իսկ 1906ի Գեղունին յորմէ քիչ օրինակներ միայն ունինք, կ'արժէ 10 ֆրանկ: Ունենալ փափաքողներ, այս պատեն առթէն օգտուելով դիմելու են մեզ ուղղակի հետևեալ հացէով՝

*Imprimerie Arménienne*

*St. Lazare VENISE (Italie)*

## Կ Ա Ր Ե Ի Ո Ր Ա Ջ Դ



Արոնք որ կը փափաքին մեր Բնաշխարհի նկարագիրները պարունակող Պատկերազարդ Բնաշխարհիկ Բառարանը ունենալ, այժմէն դիմելու են մեզ ուղղակի. հակառակ պարագային, տպագրուած օրինակները կը սպառին և մենք անկարող կ'ըլլանք իրենց խնդիրը կատարելու:

Անոնք՝ որ դեռ ստացած չեն առաջին հատորը, մեզ դրկելու են 30 Փր. և մենք անմիջապէս կը դրկենք Ա. հատորը և Բ հատորի առաջին յիսուն թերթեան գիրքը. իսկ Բ գիրքը կը դրկուի տպագրութիւնը աւարտելուն:

Անոնք՝ որ ստացած են Ա. հատորը,

մեզ զրկելու են միայն Բ հատորի  
բաժնեգինն՝ 15 Ֆր. և մենք անմիջա-  
պէս կը զրկենք Բ հատորի առաջին  
յիսուկներէն գիրքը, իսկ Բ գիրքը  
կը զրկուի տպագրութիւնը աւարտելուն:

Այս առթիւ մեր բազմաթիւ հին բա-  
ժանորդաց ներողամտութիւնը կը խնդ-  
րենք, ինչ ինչ պատճառներով այս գործի  
տպագրութեան այսչափ դանդաղելուն:

Բնաշխարհիկի լոյս տեսնելու մասին  
լուր կու տան մեր օրաթերթերէն ա-  
մէնէն աւելի տարածուածները: Մեր  
բաժանորդներէն բոլոր անոնք՝ որ ժա-  
մանակին չեն ստանար բառարանը, կը  
խնդրուի որ քարտով մը մեզ յայտնեն  
իրենց նոր հասցէն և յիշեն միանգա-  
մայն թէ երբ բաժանորդ գրուած են,  
որ շուտով իրենց խնդիրը կատարենք:





3725-3732

11-90

2013



1 0020125  
2 0020126  
3 0020127  
4 0020128  
5 0020129  
6 0020130  
7 0020131  
8 0020132





